# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"4" փետրվարի 2011թ № 11Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա/ ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի <<Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին>> N318-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011թ. հունվարի 31-ի <<Բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների ներդրման աշխատանքները կազմակերպելու, համակարգելու և շարունակական հսկողություն իրականացնելու մասին>> N 97-Ա հրամանի 3.1 կետի դրույթների, **որոշում եմ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում հիվանդանոցային ծառայություններ մատուցող բժշկական կենտրոններում համավճարի գործառույթի ներդրման աշխատանքները կազմակերպող և գործընթացի նկատմամբ շարունակական հսկողություն իրականացնող հանձնաժողովի կազմը համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանից բխող անհրաժեշտ աշխատանքների իրականացումը մարզային ենթակայության կազմակերպություններում և տեղեկատվություն ներկայացնել համաձայն սահմանված կարգի:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. փետրվարի 4
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2011 թ. փետրվարի 4-ի N __ որոշման

# ԿԱԶՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արա Դոլունց – ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/

Աշոտ Ծատրյան – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Աշոտ Մարդյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Նունե Գևորգյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Կառլեն Կոզմանով - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան